

«ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ

«AVANGARD INVEST» CJSC

«АВАНГАРД ИНВЕСТ» ЗАО

0025, Հայաստանի Հանրապետություն, Երևան, Մարալանցի 1
0025, Republic of Armenia, Yerevan, Saralanj 1
0025, Республика Армения, г. Ереван, Сараландж 1

N 05/22/24-4

22.05.2024թ.

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան խոշորացված
համայնքի ղեկավար պարոն Ս.Միրայեյանին

Հարգելի՛ պարոն Միրայեյան

«ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍԹ» ՍՊԸ Ընկերությունը՝ գրանցված Երևան, Կենտրոն 0025, Մարալանց 1 հասցեում, ցանկանում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան խոշորացված համայնքի Հրազդան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող Հրազդանի գաբրոների և գրանողիորիտների հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ստանալ:

Գործընթացը սկսելու համար «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ Օրենքի 16 - րդ կետի համաձայն ձեզ ենք ներկայացնում նախատեսվող աշխատանքների համառոտ նկարագիրը: Խնդրում են կազմակերպել հանրային լսում և տալ նախնական համաձայնություն:



Հարգանքով՝

«ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍԹ» ՍՊԸ տնօրեն՝

Է. Ավետիսյան

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի գաբրոների և գրանոդիորիտների հանքավայրում
նախատեսվող աշխատանքների համառոտ նկարագիրը

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի գաբրոների և գրանոդիորիտների հանքավայրը գտնվում
է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքից 3կմ հյուսիս-արևմուտք:

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության
«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված
տեղեկատվության համաձայն ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի գաբրոների և
գրանոդիորիտների հանքավայրի հաշվեկշռային պաշարները 2004 թվականի դեկտեմբերի 1ի
դրությամբ հաստատվել են ՀՀ ԲՆ աշխատակազմի ՕՀՊԳ-ի 25.04.2005 թվականի N 63
որոշմամբ, հետևյալ կարգերով և քանակներով՝

Գաբրո՝ B կարգով – 1324.2 հազար մ³,

Գրանոդիորիտ՝ B կարգով – 2324.8 հազար մ³:

Բլոկների ելքը գրանոդիորիտներից կազմում է 40%, գաբրոներից 50%:

Հանքավայրը չի շահագործվել: Հանքավայրը ծանրաբեռնված չէ ընդերքօգտագործման
իրավունքով:

Հունքը նախատեսված է երեսպատման սալիկների և խճի արտադրության համար:

Ընկերությունը ցանկանում է ընդերքօգտագործման իրավունք ստանալ տրամադրման
ենթակա պաշարները շահագործելու նպատակով:

Նշված պաշարները եզրագծված են հետևյալ ծայրակետային կոորդինատներով (ըստ
ARMWGS համակարգի)

Տեղամաս 1 /մակերեսը 5.7հա/

1. Y=8477504.0000 X=4493001.0000
2. Y=8477300.0000 X=4492893.0000
3. Y=8477218.0000 X=4493129.0000
4. Y=8477380.0000 X=4493219.0000
5. Y=8477404.0000 X=4493182.0000
6. Y=8477429.0000 X=4493163.0000
7. Y=8477460.0000 X=4493141.0000

8. Y=8477500.0000 X=4493098.0000

Տեղամաս 2 /մակերեսը 3.65հա/

1. Y=8477390.0000 X=4492700.0000
2. Y=8477292.0000 X=4492773.0000
3. Y=8477444.0000 X=4492941.0000
4. Y=8477624.0000 X=4492811.0000
5. Y=8477598.0000 X=4492794.0000
6. Y=8477571.0000 X=4492785.0000
7. Y=8477497.0000 X=4492773.0000
8. Y=8477473.0000 X=4492763.0000
9. Y=8477435.0000 X=4492740.0000
10. Y=8477414.0000 X=4492724.0000

Հունքը նախատեսված է երեսպատման սալիկների և խճի արտադրության համար:

Արդյունահանված օգտակար հանածոն կտեղափոխվի ջարդիչ-տեսակավորող կայան և քարի մշակման արտադրամաս, որտեղից էլ կտարամադրվի գևորդին կամ կիրացվի տեղում՝ սպառողի տրանսպորտային միջոցներով:

Համայնքի համաձայնությունը ստանալուց հետո ընկերությունը կկազմի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և աշխատանքային նախագծի հետ միասին ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացնի Լիազոր մարմնին:

Նախատեսվելիք աշխատանքներն իրականացվելու են ՀՀ և միջազգային օրենքների պահանջների համապատասխան: